

Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, և հաստատությունները դրա բովանդակության համար որևէ պատասխանատվություն չեն կրում

►B

ԽՈՐՀՐԴԻ 1991 թվականի մայիսի 21-ի ՀՐԱՀԱՆԳ

Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին (թիվ 91/271/ԵՏՀ)

(ՊՏ L 135, 30.05.1991թ., էջ 40)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագիր

	թիվ	էջ	ամսաթիվ
►M1 Հանձնաժողովի 1998 թվականի փետրվարի 27-ի թիվ 98/15/ԵՀ հրահանգով (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)	L 67	29	07.03.1998թ.
▼M2 Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով	L 284	1	31.10.2003թ.
▼M3 Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի թիվ 1137/2008 (ԵՀ) կանոնակարգով	L 311	1	21.11.2008թ.

Ուղղված՝

C1 Ուղղմամբ՝ ՊՏ L 139, 02.06.1999 թ., էջ 34 (98/15)

ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՀԱՆԳ

1991 թվականի մայիսի 21-ի

Քաղաքային կեղտաջրերի մաքրման մասին

(91/271/ԵՏՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 130-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

հաշվի առնելով Եվրոպական պառլամենտի եզրակացությունը (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

Քանի որ 1988 թվականի հունիսի 28-ին «Հյուսիսային ծովի և Համայնքի այլ ջրերի պաշտպանության մասին» Խորհրդի որոշմամբ (4) Հանձնաժողովին կոչ արվեց ներկայացնել Համայնքի մակարդակով քաղաքային կեղտաջրերի մաքրման համար անհրաժեշտ միջոցների առաջարկներ,

քանի որ մեկ անդամ պետությունում կեղտաջրերի ոչ բավարար չափով մաքրման հետևանքով առաջացած աղտոտումը հաճախ ազդեցություն է գործում մյուս անդամ պետությունների ջրերի որակի վրա, քանի որ անհրաժեշտ է Համայնքի մակարդակով, 130-րդ հոդվածին համապատասխան, գործողություններ իրականացնել,

քանի որ շրջակա միջավայրի վրա բացասաբար անդրադարձող՝ ոչ բավարար չափով մաքրված քաղաքային կեղտաջրերի հեռացման հետևանքները կանխելու նպատակով անհրաժեշտ է քաղաքային կեղտաջրերի երկրորդային մաքրում իրականացնել,

քանի որ անհրաժեշտ է խոցելի գոտիներում առավել խիստ չափանիշներով կեղտաջրերի մաքրում պահանջել, քանի որ որոշ՝ պակաս խոցելի գոտիներում կարելի էր կեղտաջրերի առաջնային մաքրում իրականացնել,

քանի որ կոյուղու համակարգեր մուտք գործող արդյունաբերական կեղտաջրերը, ինչպես նաև քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից կեղտաջրերի արտանետումը և տիղմի հեռացումը պետք է կարգավորվի ընդհանուր կանոններով կամ կանոնակարգերով և (կամ) կոնկրետ թույլտվություններով,

քանի որ արդյունաբերական ոլորտներից քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններ մուտք չգործող՝ կենսաբանորեն քայքայվող արդյունաբերական կեղտաջրերի արտանետումը, նախքան դրանց՝ ընդունող ջրեր արտանետումը, պետք է իրականացվի համապատասխան պահանջներին համապատասխան,

քանի որ անհրաժեշտ է խթանել կեղտաջրերի մաքրումից առաջացող տիղմի վերամշակումը, քանի որ տիղմի հեռացումը մակերևութային ջրեր պետք է աստիճանաբար դադարեցնել,

քանի որ անհրաժեշտ է դիտանցման ենթարկել կեղտաջրերի մաքրման կայանները, ընդունող ջրերը և տիղմի հեռացումը՝ կեղտաջրերի արտանետման կողմնակի ազդեցություններից շրջակա միջավայրի պաշտպանությունն ապահովելու համար,

քանի որ կարևոր է ապահովել, որ կեղտաջրերի ու տիղմի վերաբերյալ տեղեկությունները պարբերական զեկույցների միջոցով մատչելի դառնան հանրության համար,

քանի որ անդամ պետությունները պետք է մշակեն և Հանձնաժողով ներկայացնեն սույն Հրահանգի իրականացման ազգային ծրագրեր,

քանի որ սույն Հրահանգի իրականացման և այն տեխնիկական առաջընթացին համապատասխանեցնելու հետ կապված հարցերում Հանձնաժողովին օժանդակելու համար անհրաժեշտ է հանձնաժողով ստեղծել,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Սույն Հրահանգը վերաբերում է քաղաքային կեղտաջրերի հավաքմանը, մաքրմանը և արտանետմանը, ինչպես նաև՝ արդյունաբերական որոշ ոլորտներից կեղտաջրերի մաքրմանն ու դրանց արտանետմանը:

Սույն Հրահանգի նպատակը նշված կեղտաջրերի արտանետումների բացասական ազդեցություններից շրջակա միջավայրը պաշտպանելն է:

Հոդված 2

Սույն Հրահանգի նպատակով՝

1. «քաղաքային կեղտաջուր» նշանակում է կոմունալ-կենցաղային կեղտաջուր կամ կոմունալ-կենցաղային կեղտաջրի ու արդյունաբերական կեղտաջրի խառնուրդ, ինչպես նաև համակարգ ներթափանցած անձրևային ջուր.
2. «կոմունալ-կենցաղային կեղտաջուր» նշանակում է բնակավայրերի և սպասարկման օբյեկտների կեղտաջուր, որը հիմնականում առաջանում է մարդու նյութափոխանակությունից և կենցաղային գործունեությունից.
3. «արդյունաբերական կեղտաջուր» նշանակում է ցանկացած կեղտաջուր, որն արտանետվում է առևտրային կամ արդյունաբերական գործունեություն իրականացնող շինություններից՝ բացառությամբ կոմունալ-կենցաղային կեղտաջրի և համակարգ ներթափանցած անձրևային ջրի.
4. «ազլումերացիա» նշանակում է այնպիսի տարածք, որտեղ կենտրոնացած է բնակչությունը և (կամ) որտեղ տնտեսական գործունեություն է իրականացվում, նախատեսված է քաղաքային ջրերը հավաքելու և դրանք քաղաքային կեղտաջրերի մաքրման կայան կամ արտանետման վերջնական կետ տանելու համար.
5. «կոյուղու համակարգ» նշանակում է ինժեներական կառույցների համակարգ, որի օգնությամբ իրականացվում է քաղաքային կեղտաջրերի հավաքումը և տեղափոխումը.
6. «Մեկ Բ.Է.» (բնակչի էկվիվալենտ) նշանակում է կենսաբանորեն քայքայվող օրգանական միացությունների քանակություն, որը բնութագրվում է որպես 5 օրվա թթվածնի բիոքիմիական պահանջ (BOD_5) ցուցանիշով՝ մեկ բնակչի համար 60գ/օր հաշվարկով.
7. «առաջնային մաքրում» նշանակում է ֆիզիկական և (կամ) քիմիական, կախյալ նյութերի նստեցման կամ այլ պրոցեսների միջոցով քաղաքային կեղտաջրերի մաքրում, որտեղ համակարգ մուտք գործող կեղտաջրի թթվածնի կենսաքիմիական հնգօրյա

պահանջը նվազում է առնվազն 20 տոկոսով՝ նախքան արտանետումը և համակարգ մուտք գործող կեղտաջրերի ընդհանուր կախյալ նյութերը նվազում են առնվազն 50 տոկոսով.

8. «Երկրորդային մաքրում» նշանակում է կենսաբանական մաքրման, կախյալ նյութերի երկրորդային նստեցման կամ այն պրոցեսների միջոցով քաղաքային կեղտաջրերի մաքրում, որտեղ իրականացվում են I հավելվածի 1-ին աղյուսակով սահմանված պահանջները.

9. «պատշաճ մաքրում» նշանակում է ցանկացած պրոցեսի և (կամ) հեռացման համակարգի միջոցով քաղաքային կեղտաջրերի մաքրում, որն արտանետվելուց հետո հնարավոր է դարձնում, որպեսզի ընդունող ջրերը համապատասխանեն որակի կառավարման համապատասխան նպատակներին և սույն ու Համայնքի այլ հրահանգների համապատասխան դրույթներին.

10. «տիղմ» նշանակում է քաղաքային կեղտաջրի մաքրման կայաններից առաջացող նստվածքային տիղմ՝ մաքրված կամ չմաքրված.

11. «Էվտրոֆիկացիա» նշանակում է սնուցիչ նյութերով՝ հատկապես ազոտի և (կամ) ֆոսֆորի միացություններով ջրային ռեսուրսների հագեցվածություն, որն առաջացնում է ջրիմուռների և այլ ջրային բույսերի արագ աճ՝ ստեղծելու համար ջրային օրգանիզմների բիոցենոզի հավասարակշռության խախտում և ջրային ռեսուրսների որակի վատթարացում.

12. «Էստուար» նշանակում է գետաբերանաձոցի մոտ քաղցրահամ և ափամերձ ջրերի միջև անցումային տարածք: Անդամ պետությունները պետք է որոշեն գետաբերանաձոցերի արտաքին (դեպի ծով) սահմանները սույն Հրահանգի նպատակներով՝ որպես իրականացման ծրագրի մաս՝ 17 (1) և (2) հոդվածի դրույթներին համապատասխան.

13. «ափամերձ ջրեր» նշանակում է ամենացածր մակարդակից կամ գետաբերանաձոցի արտաքին սահմաններից դուրս ջրեր:

Հոդված 3

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ բոլոր ագլոմերացիաներն ունենան քաղաքային կեղտաջրերի հեռացման համակարգեր՝

- ամենաուշը մինչև 2000 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 15 000-ից ավելի բնակչություն ունեցող ագլոմերացիաների դեպքում, և
- ամենաուշը մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 2 000-ից մինչև 15 000 բնակչություն ունեցող ագլոմերացիաների դեպքում:

Հինգերորդ հոդվածով որպես «խոցելի գոտիներ» համարվող՝ ընդունող ջրերն արտանետվող քաղաքային կեղտաջրերի դեպքում անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 10 000-ից ավելի բնակչություն ունեցող ագլոմերացիաները, ամենաուշը մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը կոյուղու համակարգեր ունենան:

Եթե կոյուղու համակարգի ստեղծումը չի հիմնավորվում այն պատճառով, որ այն օգուտ չի բերի շրջակա միջավայրին կամ կհանգեցնի լրացուցիչ ծախսերի, ապա պետք է օգտագործվեն առանձին համակարգեր կամ համապատասխան այլ համակարգեր, որոնց միջոցով հնարավոր կլինի հասնելու շրջակա միջավայրի պաշտպանության նույն մակարդակի:

▼M3

2. Առաջին պարբերության մեջ նշված՝ կոյուղու համակարգերը պետք է բավարարեն I հավելվածի Ա մասի պահանջները: Հանձնաժողովը կարող է փոփոխել նշված պահանջները: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 18(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

Հոդված 4

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կոյուղու համակարգեր մուտք գործող քաղաքային կեղտաջրերը, նախքան արտանետումը, ենթարկվեն երկրորդային մաքրման կամ այլ համարժեք մաքրման հետևյալ ժամկետներում՝

- ամենաուշը մինչև 2000 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 15 000-ից ավելի բնակչություն ունեցող ագլոմերացիաներից բոլոր արտանետումների դեպքում.
- ամենաուշը մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 15 000-ից ավելի բնակչություն ունեցող ագլոմերացիաներից բոլոր արտանետումների դեպքում.
- ամենաուշը մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 2 000-ից մինչև 10 000 բնակչություն ունեցող ագլոմերացիաներից քաղցրահամ ջրեր և էստուարներ արտանետումների դեպքում:

2. Բարձր լեռնային շրջաններում (ծովի մակարդակից 1 500 մ բարձր) տեղակայված ջրեր քաղաքային կեղտաջրերի արտանետումները, որտեղ ցածր ջերմաստիճանի պատճառով դժվար է իրականացնել կեղտաջրերի կենսաբանական արդյունավետ մաքրում, ապա դրանք կարող են մաքրվել 1-ին պարբերության մեջ սահմանված խիստ պահանջներից ավելի մեղմ պահանջների կիրառմամբ՝ պայմանով, որ մանրամասն ուսումնասիրությունները ցույց տան, որ նման արտանետումները բացասաբար չեն ազդում շրջակա միջավայրի վրա:

▼M3

3. Առաջին և երկրորդ պարբերությունների մեջ նշված՝ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից արտանետումները պետք է բավարարեն I հավելվածի Բ մասի պահանջները: Հանձնաժողովը կարող է փոփոխել նշված պահանջները: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 18(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

4. Մեկ բնակչի էկվիվալենտով արտահայտված բեռնվածությունը հաշվարկելիս պետք է հիմք ընդունվի տարվա ընթացքում՝ բացառությամբ հորդ անձրևի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակների, մաքրման կայան մուտք գործող առավելագույն միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը:

Հոդված 5

1. Անդամ պետությունները պետք է, մինչև 1993 թվականի դեկտեմբերի 30-ը, երկրորդ պարբերության նպատակներով, որոշեն խոցելի գոտիները՝ II հավելվածով սահմանված չափորոշիչների համաձայն:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կոյուղու համակարգեր մուտք գործող քաղաքային կեղտաջրերը, նախքան դրանց արտանետումը խոցելի գոտիներ, ամենաուշը մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը ենթարկվեն ավելի խիստ պահանջներով մաքրման, քան 4-րդ հոդվածում նշված մաքրումն է՝ 10 000-ից ավելի բնակչություն ունեցող ագլոմերացիաներից բոլոր արտամղումների դեպքում:

▼M3

3. Երկրորդ պարբերության մեջ նշված՝ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից արտանետումները պետք է բավարարեն I հավելվածի Բ մասի պահանջները: Հանձնաժողովը կարող է փոփոխել նշված պահանջները: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 18(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

4. Հակառակ դեպքում, նշված 2-րդ և 3-րդ պարբերությունների մեջ սահմանված առանձին կայաններին ներկայացվող պահանջները կարող են չկիրառվել խոցելի գոտիներում, եթե հնարավոր լինի ցույց տալ, որ այդ գոտում քաղաքային կեղտաջրերի մաքրման բոլոր կայաններ մուտք գործող ընդհանուր բեռնվածության նվազեցման նվազագույն տոկոսն առնվազն 75 տոկոս է ընդհանուր ֆոսֆորի դեպքում և առնվազն 75 տոկոս՝ ընդհանուր ազոտի դեպքում:

5. Խոցելի գոտիներում համապատասխան ջրահավաք ավազաններում տեղակայված և այս գոտիներում աղտոտմանը նպաստող՝ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից արտանետումները կարգավորվում են 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններով:

Այն դեպքերում, երբ նշված ջրահավաք ավազանները տեղակայված են մեկ այլ անդամ պետությունում, կիրառվում է 9-րդ հոդվածը:

6. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ խոցելի գոտիները նույնականացվեն ոչ ուշ, քան չորս տարին մեկ անգամ:

7. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 6-րդ պարբերության համաձայն՝ խոցելի ճանաչված գոտիները յոթ տարի բավարարեն նշված պահանջները:

8. Սույն Հրահանգի նպատակով՝ անդամ պետությունը կարող է չորոշել խոցելի գոտիները, եթե այն իր ամբողջ տարածքով իրականացնում է 2-րդ, 3-րդ և 4-րդ պարբերություններով սահմանված մաքրման աշխատանքները:

Հոդված 6

1. Երկրորդ պարբերության նպատակներով՝ անդամ պետությունները կարող են, մինչև 1993 թվականի դեկտեմբերի 31-ը, որոշել պակաս խոցելի գոտիները՝ 11 հավելվածով սահմանված չափորոշիչների համաձայն:

2. 10 000-ից մինչև 150 000 բնակչություն ունեցող ագլոմերացիաներից ափամերձ ջրեր արտանետվող քաղաքային կեղտաջրերը, ինչպես նաև 2 000-ից մինչև 10 000 բնակչություն ունեցող ագլոմերացիաներից 1-ին պարբերության մեջ նկարագրված գոտիներում տեղակայված էստուարներ արտանետվող քաղաքային կեղտաջրերը կարող են ենթարկվել առավել մեղմ պահանջներով մաքրման, քան նախատեսված է 4-րդ հոդվածով՝ պայմանով, որ

- նման արտանետումներն առնվազն ենթարկվում են 2 (7) հոդվածով սահմանված առաջնային մաքրման՝ I Դ հավելվածով սահմանված հսկման ընթացակարգերին համապատասխան.
- համընդգրկուն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշված արտանետումները բացասաբար չեն ազդի շրջակա միջավայրի վրա:

Անդամ պետությունները պետք է նշված ուսումնասիրությունների վերաբերյալ բոլոր համապատասխան տեղեկությունները տրամադրեն Հանձնաժողովին :

3. Եթե Հանձնաժողովը գտնում է, որ 2-րդ պարբերության մեջ սահմանված պայմանները չեն բավարարվում, ապա այն Հանձնաժողովին համապատասխան առաջարկ է ներկայացնում :

4. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ պակաս խոցելի գոտիները նույնականացվեն ոչ ուշ, քան չորս տարին մեկ անգամ:

5. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ այլևս խոցելի չհամարվող գոտիները, հարկ եղած դեպքում, յոթ տարի բավարարեն 4-րդ և 5-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Հոդված 7

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մինչև 2005 թվականի դեկտեմբերի 31-ը, կոյուղու համակարգեր մուտք գործող քաղաքային կեղտաջրերը, նախքան արտանետումը, ենթարկվեն 2 (9) հոդվածով սահմանված կարգով համապատասխան մաքրման հետևյալ դեպքերում՝

- 2 000-ից պակաս բնակչություն ունեցող ագլոմերացիաներից քաղցրահամ ջրեր և էստուարներ արտանետումների դեպքում.
- 10 000-ից պակաս բնակչություն ունեցող ագլոմերացիաներից ափամերձ ջրերի արտանետումների դեպքում.

Հոդված 8

1. Անդամ պետությունները կարող են, տեխնիկական խնդիրների պատճառով առաջացած բացառիկ դեպքերում և ըստ աշխարհագրական տարածքների բաժանված բնակչության խմբերի, հատուկ դիմում ներկայացնել Հանձնաժողով՝ երկարաձգելու համար 4-րդ հոդվածը կատարելու նպատակով սահմանված ժամկետը:

2. Նշված դիմումով, որը ներկայացնելու համար անհրաժեշտ է պատշաճ կերպով հիմնավորումներ տալ, պետք է սահմանվեն արդեն հանդիպած տեխնիկական դժվարությունները, ինչպես նաև դրան պետք է կցվի համապատասխան

Ժամանակացույցով գործողությունների ծրագիր՝ իրականացնելու համար սույն Հրահանգի նպատակը: Նշված ժամանակացույցը պետք է կցվի 17-րդ հոդվածում նշված՝ իրականացման ծրագրին:

3. Կարող են ընդունելի լինել միայն տեխնիկական պատճառները և 1-ին պարբերության մեջ նշված ավելի երկար ժամկետը չի կարող 2005 թվականի դեկտեմբերի 31-ից ավելի երկարաձգվել:

▼M3

4. Հանձնաժողովը պետք է ուսումնասիրի դիմումը և ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ 18(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

5. Բացառիկ հանգամանքներում, երբ հնարավոր է ցույց տալ, որ երրորդային մաքրումը չի կարող որևէ կերպ օգուտ բերել շրջակա միջավայրին, ապա 150 000-ից ավելի բնակչություն ունեցող ագլոմերացիաներից ավելի պակաս խոցելի գոտիներ արտանետվող կեղտաջրերը կարող են 10 000-ից մինչև 15 000 բնակչություն ունեցող ագլոմերացիաներից արտանետվող կեղտաջրերի դեպքում ենթարկվել 6-րդ հոդվածով նախատեսված մաքրման:

▼M3

Նման դեպքերում անդամ պետությունները պետք է նախապես Հանձնաժողովին համապատասխան փաստաթղթեր ներկայացնեն : 4. Հանձնաժողովը պետք է ուսումնասիրի գործը և ձեռնարկի համապատասխան միջոցներ՝ 18(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

Հոդված 9

Եթե անդամ պետության իրավասության տակ գտնվող տարածքի ջրերի վրա բացասական ներգործություն են ունենում մեկ այլ անդամ պետության քաղաքային կեղտաջրերի արտանետումները, ապա այն անդամ պետությունը, որի ջրերն աղտոտվել են, կարող է մյուս մեկ այլ անդամ պետության և Հանձնաժողովին ծանուցել համապատասխան փաստերի մասին:

Համապատասխան անդամ պետությունները, հարկ եղած դեպքում, Հանձնաժողովի հետ համատեղ, կազմակերպում են համապատասխան արտանետումները հայտնաբերելու համար անհրաժեշտ աշխատանքները և աղբյուրի մոտ՝ աղտոտված ջրերը պաշտպանելուն ուղղված միջոցները՝ սույն Հրահանգի դրույթների հետ համապատասխանություն ապահովելու համար:

Հոդված 10

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայանները, որոնք կառուցվել են 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, նախագծվեն, կառուցվեն, շահագործվեն և սպասարկվեն՝ ապահովելու համար դրանց բնականոն աշխատանքը տեղական կլիմայական բոլոր նորմալ պայմանների ժամանակ: Կայանները նախագծելիս պետք է հաշվի առնել բեռնվածության սեզոնային փոփոխությունները:

Հոդված 11

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մինչև 1993 թվականի դեկտեմբերի 31-ը, կոյուղու համակարգեր և քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններ արդյունաբերական կեղտաջրերի արտանետումը կատարվի նախապես սահմանված կանոնակարգերի և (կամ) իրավասու մարմնի կամ համապատասխան այլ մարմնի կողմից տրված թույլտվությունների համաձայն:

▼M3

2. Կանոնակարգերը և (կամ) հատուկ թույլտվությունը պետք է բավարարեն I հավելվածի Գ մասի պահանջները: Հանձնաժողովը կարող է փոփոխել նշված պահանջները: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 18(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

3. Կանոնակարգերը և հատուկ թույլտվությունը պետք է վերանայվեն և, հարկ եղած դեպքում, պարբերաբար վերագնահատվեն:

Հոդված 12

1. Մաքրված կեղտաջուրը կրկին օգտագործվում է, երբ անհրաժեշտ է: Դրա հեռացման ճանապարհները պետք է նվազագույնի հասցնեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը:

2. Իրավասու մարմինները կամ համապատասխան մյուս մարմինները պետք է ապահովեն, որ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից կեղտաջրերի արտանետումը կատարվի նախապես ընդունված կանոնակարգերի և (կամ) հատուկ թույլտվությունների հիման վրա:

▼M3

3. 2 000–ից մինչև 10 000 բնակչություն ունեցող ագլոմերացիաներում տեղակայված կեղտաջրերի մաքրման կայաններից 2–րդ պարբերության համաձայն քաղցրահամ ջրեր և էստուարներ արտանետումները, ինչպես նաև 10 000 կամ ավելի բնակչություն ունեցող ագլոմերացիաներում տեղակայված կեղտաջրերի մաքրման կայաններից բոլոր քաղաքային կեղտաջրերի արտանետումները կարգավորող նախապես ընդունված կանոնակարգերով և (կամ) հատուկ թույլտվություններով սահմանվում են պայմաններ՝ բավարարելու համար I հավելվածի Բ մասի համապատասխան պահանջները: Հանձնաժողովը կարող է փոփոխել նշված պահանջները: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 18(3) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

4. Կանոնակարգերը և (կամ) թույլտվությունը պետք է վերանայվեն և, հարկ եղած դեպքում, պարբերաբար վերագնահատվեն:

Հոդված 13

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ, մինչև 2000 թվականի դեկտեմբերի 31-ը, նախքան ընդունող ջրեր կեղտաջրերի արտանետումը, քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններ մուտք չգործող և III հավելվածում թվարկված արդյունաբերական ոլորտներին պատկանող կայաններից՝ կենսաբանորեն քայքայվող արդյունաբերական կեղտաջրերը համապատասխանեն իրավասու մարմնի կամ համապատասխան այլ մարմնի կողմից տրված՝ նախապես ընդունված կանոնակարգերով և (կամ) հատուկ թույլտվությամբ սահմանված պայմաններին՝ 4 000 կամ ավելի բնակչի սպասարկող կայաններից բոլոր արտանետումների դեպքում:
2. Յուրաքանչյուր անդամ պետության իրավասու մարմին կամ համապատասխան այլ մարմին, պետք է մինչև 1993 թվականի դեկտեմբերի 31-ը սահմանի կեղտաջրերի արտանետման համապատասխան պահանջներ՝ կախված արդյունաբերության բնույթից:
3. Հանձնաժողովը պետք է, մինչև 1994 թվականի դեկտեմբերի 31-ը, համեմատի անդամ պետությունների կողմից սահմանված պահանջները: Այն զեկույցի մեջ կիրառարակի արդյունքները և, հարկ եղած դեպքում, համապատասխան առաջարկ կներկայացնի:

Հոդված 14

1. Կեղտաջրից առաջացած տիղմը կրկին օգտագործվում է, երբ անհրաժեշտ է: Հեռացման ճանապարհները պետք է նվազագույնի հասցնեն շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը:
2. Իրավասու մարմինները կամ համապատասխան մյուս մարմինները պետք է ապահովեն, որ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը, քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից տիղմի հեռացումն իրականացվի ընդհանուր կանոնների կամ գրանցման, կամ թույլտվության հիման վրա:
3. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը, մակերևութային ջրեր նավերով, խողովակներով կամ այլ եղանակներով տիղմի հեռացումն աստիճանաբար վերացվի:

4. Մինչև 3-րդ պարբերությամբ նշված՝ կեղտաջրերի հեռացման եղանակների վերացումը, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մակերևութային ջրեր հեռացված տիղմի թունավոր, կայուն կամ կենսակուտակման հատկությամբ օժտված նյութերի ընդհանուր քանակը թույլատրվի հեռացման համար և աստիճանաբար նվազեցվի:

Հոդված 15

1. Իրավասու մարմինները կամ համապատասխան մյուս մարմինները պետք է դիտանցման ենթարկեն՝

- քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից կեղտաջրերի արտանետումները՝ ստուգելու համար I.Բ հավելվածի պահանջների հետ համապատասխանությունը՝ I.Դ հավելվածով սահմանված՝ ստուգման ընթացակարգերին համապատասխան.
- մակերևութային ջրեր հեռացված տիղմերի քանակը և բաղադրությունը:

2. Իրավասու մարմինները կամ համապատասխան մյուս մարմինները պետք է դիտանցման ենթարկեն այն ջրերը, որտեղ, 13-րդ հոդվածով սահմանված կարգով, թափվում են քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից արտանետումները և ուղղակի արտանետումները, եթե հնարավոր է, որ դրանք բացասական ազդեցություն ունենան ընդունող շրջակա միջավայրի վրա:

3. Վեցերորդ հոդվածի դրույթների համաձայն՝ կեղտաջրերի արտանետման և մակերևութային ջրեր տիղմի հեռացման դեպքում անդամ պետությունները պետք է դիտանցման ենթարկեն և համապատասխան այլ ուսումնասիրություններ կատարեն՝ ստուգելու համար, թե արդյոք կեղտաջրերի արտանետումը կամ հեռացումը բացասական ազդեցություն չի ունենում շրջակա միջավայրի վրա:

4. Առաջին, երկրորդ և երրորդ պարբերություններին համապատասխան՝ իրավասու մարմինների կամ համապատասխան մյուս մարմինների հավաքած տեղեկությունները պետք է պահվեն անդամ պետությունում և ներկայացվեն Հանձնաժողովին՝ դիմումն ստանալուց հետո վեց ամսվա ընթացքում:

5. Հանձնաժողովը կարող է մշակել ուղեցույցներ՝ 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների մեջ նշված դիտանցումն իրականացնելու համար՝ 18(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն:

▼B

Հոդված 16

Չհակասելով «Շրջակա միջավայրի մասին տեղեկությունների մատչելիության ազատության մասին» Խորհրդի 1990 թվականի հունիսի 7-ի թիվ 90/313/ԵՏՀ հրահանգի (5) դրույթների իրականացմանը՝ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ համապատասխան մարմինները կամ մյուս մարմինները յուրաքանչյուր երկու տարին մեկ հրապարակի իրենց տարածքներում կեղտաջրերի և տիղմի հեռացման իրավիճակի մասին զեկույցներ: Անդամ պետությունները նշված զեկույցները փոխանցում են Հանձնաժողովին՝ դրանց հրապարակումից հետո:

Հոդված 17

1. Անդամ պետությունները մինչև 1993 թվականի դեկտեմբերի 31-ը պետք է սույն Հրահանգի իրականացման ծրագիր մշակեն :
2. Անդամ պետությունները մինչև 1994 թվականի հունիսի 30-ը պետք է Հանձնաժողովին ծրագրի մասին տեղեկություններ տրամադրեն :
3. Անդամ պետությունները պետք է, հարկ եղած դեպքում, յուրաքանչյուր երկու տարին մեկ, մինչև հունիսի 30-ը, Հանձնաժողովին տրամադրեն 2-րդ պարբերության մեջ նշված՝ թարմ տեղեկությունները:

▼M3

4. Հանձնաժողովը պետք է, 18(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգի համաձայն, սահմանի ազգային ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու համար ընդունվելիք մեթոդները և ձևաչափը: Նշված մեթոդներում և ձևաչափերում ցանկացած փոփոխություն պետք է ընդունվի այդ ընթացակարգին համապատասխան:

▼B

5. Հանձնաժողովը պետք է յուրաքանչյուր երկու տարին մեկ վերանայի և գնահատի նշված 2-րդ և 3-րդ պարբերությունների համաձայն ստացված տեղեկությունները և դրանց մասին զեկույց հրապարակի :

▼M2

Հոդված 18

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն:

▼M3

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 19

1. Անդամ պետություններն ընդունում են սույն Հրահանգին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ օրենքներ, կանոնակարգեր և վարչական դրույթներ ոչ ուշ, քան մինչև 1993 թվականի հունիսի 30-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

2. Երբ անդամ պետություններն ընդունում են 1-ին պարբերությամբ նշված միջոցները, ապա դրանք պետք է սույն Հրահանգին կատարվող հղում պարունակեն կամ դրանց պաշտոնական հրապարակման պահին պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

3. Անդամ պետությունները Հանձնաժողովին են ուղարկում ազգային իրավունքի հիմնադրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 20

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՂՏԱՋՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Ա. Կոյուղու համակարգերը (6)

Կոյուղու համակարգերը նախագծելիս պետք է հաշվի առնեն քաղաքային կեղտաջրերին ներկայացվող պահանջները:

Կոյուղու համակարգերի նախագծումը, կառուցումը և սպասարկումը պետք է իրականացվի տեխնիկական լավագույն գիտելիքներին համապատասխան՝ չպահանջելով լրացուցիչ ծախսեր՝ հատկապես կապված՝

- քաղաքային կեղտաջրերի ծավալի և հատկությունների հետ.
- ջրի կորստի կանխման հետ.
- ընդունող ջրերի՝ տարափային կեղտաջրերի արտահոսքի պատճառով առաջացած աղտոտման սահմանափակման հետ:

Բ. Քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից ընդունող ջրեր արտանետումները (7)

1. Կեղտաջրերի մաքրման կայանները պետք է նախագծվեն կամ ձևափոխվեն այնպես, որ մուտք գործող կեղտաջրերի և մաքրված հոսքաջրերի ներկայացուցչական նմուշները հնարավոր լինի վերցնել՝ նախքան կեղտաջրերի արտանետումն ընդունող ջրեր:
2. Չորրորդ և հինգերորդ հոդվածներին համապատասխան մշակման ենթարկված՝ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից արտանետումները պետք է բավարարեն 1-ին աղյուսակում ներկայացված պահանջները:
3. II.Ա (ա) հավելվածով սահմանված՝ էվտրոֆիկացիայի ենթակա խոցելի գոտիներ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից արտանետումները պետք է բավարարեն սույն հավելվածի 2-րդ աղյուսակում ներկայացված պահանջները:
4. Հարկ եղած դեպքում պետք է կիրառվեն 1-ին և (կամ) 2-րդ աղյուսակներում ներկայացված պահանջներից ավելի խիստ պահանջներ՝ ապահովելու համար, որ ընդունող ջրերը բավարարեն ցանկացած մյուս համապատասխան հրահանգները:

5. Քաղաքային կեղտաջրի արտանետման կետերը պետք է հնարավորինս այնպես ընտրվեն, որ նվազագույնի հասցվի ընդունող ջրերի վրա դրանց բացասական ազդեցությունը:

Գ. Արդյունաբերական կեղտաջրերը

Արդյունաբերական այն կեղտաջրերը, որոնք մուտք են գործում կոյուղու համակարգեր և քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններ, պետք է ենթարկվեն անհրաժեշտ նախնական մաքրման հետևյալ պահանջներն ապահովելու նպատակով՝

- կոյուղու համակարգը և մաքրման կայանները սպասարկող անձնակազմի առողջության պաշտպանությունը.
- կոյուղու համակարգերի, կեղտաջրերի մաքրման կայանների և համապատասխան սարքավորումների պահպանությունը.
- կեղտաջրերի մաքրման կայանների, ինչպես նաև տիղմի մշակման կառույցների անխափան աշխատանքը.
- մաքրման կայաններից արտանետումների՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կամ ընդունող ջրերի՝ Համայնքի այլ հրահանգների պահանջներին համապատասխանության կանխումը.
- տիղմի անվտանգ՝ շրջակա միջավայրի համար բարենպաստ կերպով հեռացումը:

Դ. Դիտանցման ստանդարտ մեթոդները և արդյունքների գնահատումը

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ կիրառվի դիտանցման այն մեթոդը, որը համապատասխանում է առնվազն ստորև նշված պահանջների մակարդակին:

Երկրորդ, երրորդ և չորրորդ պարբերությունների մեջ նշված մեթոդներից բացի կարող են կիրառվել այլ մեթոդներ, եթե ցույց տրվի, որ համարժեք արդյունքներ կարող են ստացվել նաև այդ մեթոդներով:

Անդամ պետությունները պետք է Հանձնաժողովին տրամադրեն կիրառված մեթոդի վերաբերյալ բոլոր համապատասխան տեղեկությունները: Եթե Հանձնաժողովը գտնում է, որ 2–րդ, 3–րդ և 4–րդ պարբերությունների մեջ սահմանված պայմանները

չեն բավարարվում, ապա այն Խորհրդին համապատասխան առաջարկ է ներկայացնում :

2. Հոսքի հետ համամասնորեն կամ 24-ժամյա պարբերականությամբ վերցվող նմուշները պետք է հավաքվեն մաքրման կայանի ելքի և, հարկ եղած դեպքում, մուտքի մոտ նշմարելի կետում՝ դիտանցման ենթարկելու համար սույն Հրահանգով սահմանված՝ արտանետված կեղտաջրերին ներկայացվող պահանջների հետ համապատասխանությունը:

Նմուշների հավաքման և անալիզի ժամանակ նմուշների դեգրադացիան նվազեցնելու համար պետք է կիրառվեն պատշաճ լաբորատոր միջազգային գործելակերպերը:

3. Նմուշների տարեկան նվազագույն քանակը որոշվում է՝ ըստ մաքրման կայանի չափսի, և տարվա ընթացքում պարբերաբար հավաքվում է՝

2 000–9 999
բնակչության հաշվով

Տասներկու նմուշ՝ առաջին տարվա ընթացքում:

Չորս նմուշ՝ հաջորդ տարիների ընթացքում, եթե հնարավոր է ցույց տալ, որ ջուրն առաջին տարվա ընթացքում համապատասխանում է հրահանգի դրույթներին: Եթե չորս նմուշից որևէ մեկը չի համապատասխանում հրահանգի դրույթներին, ապա անհրաժեշտ է հաջորդ տարում վերցնել տասներկու նմուշ:

(10 000–49 999՝
բնակչության հաշվով)

Տասներկու նմուշ:

– 50 000 կամ ավելի՝
բնակչության հաշվով

Քսանչորս նմուշ:

4. Ենթադրվում է, որ մաքրված կեղտաջուրը համապատասխանում է համապատասխան ցուցանիշներին, եթե յուրաքանչյուր համապատասխան ցուցանիշն առանձին դիտարկելու դեպքում, պարզ է դառնում, որ ջրի նմուշները համապատասխանում են համապատասխան նորմին հետևյալ կերպ՝

ա) Աղյուսակ 1–ով և 2(7) հոդվածով սահմանված ցուցանիշների դեպքում, 1–ին աղյուսակով և 2 (7) հոդվածով սահմանված կոնցենտրացիաներով և (կամ) տոկոսային նվազեցմամբ արտահայտված նմուշների առավելագույն քանակը, որը կարող է չհամապատասխանել պահանջներին, նշվում է 3–րդ աղյուսակում.

բ) Աղյուսակ 1-ի կոնցենտրացիաներով արտահայտված ցուցանիշների դեպքում շահագործման բնականոն պայմաններում վերցված նմուշները, որոնք չեն համապատասխանում սահմանված պահանջներին, չպետք է 100 տոկոսից ավելի շեղվեն նորմայից: Ընդհանուր կախյալ նյութերին վերաբերող՝ կոնցենտրացիաներով արտահայտված նորմերի դեպքում կարող է ընդունելի լինել մինչև 150 տոկոս շեղում:

գ) Աղյուսակ 2-ում նշված ցուցանիշների դեպքում յուրաքանչյուր ցուցանիշի նմուշների տարեկան միջին արժեքը պետք է համապատասխանի համապատասխան նորմային:

5. Համապատասխան ջրի որակի սահմանային արժեքները չպետք է հաշվի առնվեն, եթե դրանք անսովոր իրավիճակների, ինչպես օրինակ՝ վարար անձրևի հետևանք են:

Աղյուսակ 1. Հրահանգի 4–րդ և 5–րդ հոդվածների պահպանմամբ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից արտանետումներին ներկայացվող պահանջները Կիրառվում են կոնցենտրացիայի կամ նվազեցման տոկոսի արժեքները:

Ցուցանիշներ	Կոնցենտրացիա	Նվազեցման նվազագույն տոկոս (1)	Չափման ստանդարտ մեթոդներ
Թթվածնի կենսաքիմիական պահանջ (ԹԿՊ5 20°C պայմաններում) առանց նիտրատների (2)	25 մգ O ₂ /լ	70-90 40՝ 4(2) հոդվածի համաձայն	Համասեռված, չֆիլտրված, չխառնվող նմուշ: Զրում լուծված թթվածնի քանակության որոշումը՝ 20 °C ± 1 °C և բացարձակ մթության պայմաններում հինգ օր ինկուբացիայից առաջ և հետո Նիտրատի օքսիդացման արգելակչի ավելացում
Թթվածնի քիմիական պահանջ (ԹՔՊ)	125 մգ O ₂ /լ	75	Համասեռված, չֆիլտրված, չխառնվող նմուշ: Կալիումի բիքրոմատ
Ընդհանուր կախյալ նյութեր	35 մգ/լ (3) 35՝ 4(2) հոդվածի համաձայն (10 000–ից ավելի բնակչի հաշվով)	90 (3) 90՝ 4(2) հոդվածի համաձայն (10 000–ից ավելի բնակչի հաշվով)	– Ներկայացուցչական նմուշի ֆիլտրում՝ 0,45 մմ թաղանթային զտիչով: Չորացում՝ 105 °C պայմաններում և կշռում – Ներկայացուցչական նմուշի ցենտրիֆուգացում

	60՝ 4(2) հողվածի համաձայն (2 000–ից մինչև 10 000 բնակչի հաշվով)	70՝ 4(2) հողվածի համաձայն (2 000–ից մինչև 10 000 բնակչի հաշվով)	(առնվազն հինգ բույս՝ 2 800–3 200 գր միջին արագացմամբ), չորացում՝ 105 °C պայմաններում և կշռում
--	---	---	---

(¹) Կեղտաջրերի մաքրման կայան մուտք գործող ջրի ծանրաբեռնվածության նվազեցումը:

(²) Ցուցանիշը կարող է փոխարինվել մեկ այլ ցուցանիշով՝ ընդհանուր օրգանական ածխածին (ԸՕԱ) կամ ընդհանուր թթվածնի պահանջ (ԸԹՊ), եթե հնարավոր լինի կապ հաստատել ԹԿՊ₅-իև փոխարինող ցուցանիշի միջև:

(³) Այս պահանջը կամընտիր է:

Կենսամաքրման լճակներից արտահոսքին վերաբերող անալիզներն իրականացվում են ֆիլտրված նմուշների վրա: Այնուամենայնիվ, ընդհանուր կախյալ նյութերի կոնցենտրացիան չֆիլտրված ջրի նմուշներում չպետք է գերազանցի 150 մգ/լ-ը:

▼M1

Աղյուսակ 2. II.Ա(ա) հավելվածով սահմանված՝ էվտրոֆիկացիայի ենթակա խոցելի գոտիներ քաղաքային կեղտաջրերի մաքրման կայաններից արտանետումներին ներկայացվող պահանջները Մեկ ցուցանիշը կամ երկու ցուցանիշը միասին կարող են կիրառվել՝ կախված տեղական իրավիճակից: Կիրառվում են կոնցենտրացիաների կամ նվազեցման տոկոսի արժեքները:

Ցուցանիշներ	Կոնցենտրացիա	Նվազեցման նվազագույն տոկոս (1)	Չափման ստանդարտ մեթոդներ
Ընդհանուր ֆոսֆոր	►C1_2 մգ/լ (10 000–ից մինչև 100 000 բնակչի հաշվով)	80	Մոլեկուլային կլանման սպեկտրաչափական մեթոդ
	1 մգ/լ (100 000–ից ավելի բնակչի հաշվով)		
Ընդհանուր ազոտ (2)	15 մգ/լ (10 000–ից մինչև 100 000 բնակչի հաշվով) (3)	70-80	Մոլեկուլային կլանման սպեկտրաչափական մեթոդ
	10 մգ/լ (100 000–ից Բ.Է.) (3)		

- (1) Կեղտաջրերի մաքրման կայան մուտք գործող ջրի ծանրաբեռնվածության նվազեցումը:
- (2) Ընդհանուր ազոտ՝ նշանակում է ընդհանուր Kjeldahl ազոտի (օրգանական և ամոնիակային ազոտ), նիտրատ–ազոտի և նիտրատ–ազոտի հանրագումար
- (3) Կոնցենտրացիայի նշված արժեքները I հավելվածի, Դ.4(գ) պարբերության մեջ նշված միջին տարեկան արժեքներն են: Այնուամենայնիվ, ազոտին ներկայացվող պահանջները կարող են ստուգվել՝ կիրառելով միջին օրականը, եթե ապացուցվում է, որ I հավելվածի Դ.1 պարբերությանը համապատասխան, հնարավոր է ապահովել պաշտպանության նույն մակարդակը: Այս դեպքում միջին օրականը չպետք է գերազանցի բոլոր նմուշների ընդհանուր ազոտի 20 մգ/լ–ը, եթե հոսքաջրի ջերմաստիճանը կենսաբանական ռեակտորում 12 °C բարձր է կամ հավասար է դրան: Ջերմաստիճանին վերաբերող պայմանները կարող են փոխարինվել շահագործման ժամանակի սահմանափակմամբ՝

հաշվի առնելով տարածաշրջանային կլիմայական պայմանները:

Աղյուսակ 3

Տարվա ընթացքում վերցված նմուշների խումբը	Պահանջներին չհամապատասխանող նմուշների թույլատրելի առավելագույն քանակը
4-7	1
8-16	2
17-28	3
29-40	4
41-53	5
54-67	6
68-81	7
82-95	8
96-110	9
111-125	10
126-140	11
141-155	12
156-171	13
172-187	14
188-203	15
204-219	16
220-235	17
236-251	18
252-268	19
269-284	20
285-300	21
301-317	22
318-334	23
335-350	24
351-365	25

ԽՈՑԵԼԻ ԵՎ ՊԱԿԱՍ ԽՈՑԵԼԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

Ա. Խոցելի գոտիներ

Ջրային մարմինը պետք է համարվի խոցելի գոտի, եթե այն ընկնում է հետևյալ խմբերից որևէ մեկի մեջ՝

ա) բնական քաղցրահամ լճեր, այլ քաղցրահամ ջրամբարներ, էստուարներ, ափամերձ ջրեր, որոնք էվտրոֆիկ են կամ մոտ ապագայում կարող են դառնալ էվտրոֆիկ, եթե չձեռնարկվեն պաշտպանիչ գործողություններ:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն հետևյալ տարրերը, երբ դիտարկվում են, թե՛ հետագա մաքրմամբ որ սնուցիչ նյութը պետք է կրճատվի՝

i) լճեր և հոսքերին հասնող լճեր (ռեզերվուարներ)(փակ ծովախորշեր), որտեղ ջրի փոխանակությունը վատ է կատարվում՝ հանգեցնելով ջրի կուտակման: Նման գոտիներում ֆոսֆորը պետք է հեռացվի՝ մինչև չապացուցվի, որ դրա հեռացումը ոչ մի ազդեցություն չունի էվտրոֆիկացիայի մակարդակի վրա: Եթե տեղի է ունենում ջրի արտանետում խոշոր ազլումերացիաներից, ապա անհրաժեշտ է նաև քննարկել ազոտի հեռացման հարցը.

ii) էստուարներ, ծովախորշեր և ափամերձ այլ ջրեր, որտեղ ջրի փոխանակությունը վատ է կատարվում կամ որոնք ստանում են սնուցող նյութերի մեծ քանակություններ: Փոքր ազլումերացիաներից ջրի արտանետումները, սովորաբար, այս գոտիներում մեծ կարևորություն չեն ներկայացնում, մինչդեռ խոշոր ազլումերացիաների դեպքում ֆոսֆորի և (կամ) ազոտի հեռացման հարցը պետք է քննարկվի, մինչև չապացուցվի, որ դրանց հեռացումը ոչ մի ազդեցություն չունի էվտրոֆիկացիայի մակարդակի վրա.

բ) «Անդամ պետություններում խմելու ջրի արդյունահանման նպատակով մակերևութային ջրերի պահանջվող որակին վերաբերող» Խորհրդի 1975 թվականի հունիսի 16–ի 75/440/ԵՏՀ հրահանգի համապատասխան դրույթներով սահմանված նիտրատի կոնցենտրացիայից ավելի կոնցենտրացիա պարունակող խմելու ջրի արդյունահանման նպատակով նախատեսված մակերևութային քաղցրահամ ջրեր, եթե գործողություններ չեն ձեռնարկվում.

գ) գոտիներ, որտեղ անհրաժեշտ է կատարել սույն Հրահանգի 4-րդ հոդվածով սահմանված մաքրումից բացի այլ մաքրում՝ իրականացնելու համար Խորհրդի հրահանգների պահանջները:

Բ. Պակաս խոցելի գոտիներ

Ծովային ջրային մարմինը կամ գոտին կարող է համարվել պակաս խոցելի գոտի, եթե կեղտաջրերի արտանետումը բացասական ազդեցություն չի ունենում շրջակա միջավայրի վրա՝ այդ գոտում առկա մորֆոլոգիական, հիդրոլոգիական կամ հիդրավլիկական հատուկ պայմանների շնորհիվ:

Պակաս խոցելի գոտիները որոշելիս անդամ պետությունները պետք է հաշվի առնեն այն ռիսկը, որ արտանետված ջուրը կարող է աղտոտել այլ գոտիներ՝ բացասական ազդեցություն թողնելով շրջակա միջավայրի վրա: Անդամ պետությունները պետք է ճանաչեն իրենց իրավասության տարածքից դուրս գտնվող խոցելի գոտիները:

Պակաս խոցելի գոտիները որոշելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ տարրերը՝

բաց ծովախորշեր, էստուարներ և ափամերձ այլ ջրեր, որտեղ ջրի փոխանակությունը լավ է կատարվում, և որոնք ենթակա չեն էվտրոֆիկացիայի կամ թթվածնի սպառման, կամ որոնք անհավանական է, որ դառնան էվտրոֆիկ կամ ենթարկվեն թթվածնի սպառման՝ քաղաքային կեղտաջրերի արտանետման հետևանքով:

III ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

1. Կաթի մթերում
2. Մրգերից և բանջարեղեններից ստացվող արտադրանքի արտադրություն
3. Զովացուցիչ ըմպելիքների արտադրություն և շալցում
4. Կարտոֆիլի մթերում
5. Մսի արդյունաբերություն
6. Գարեջրի գործարաններ
7. Ալկոհոլի և ոգելից խմիչքների արտադրություն
8. Բուսական ծագման կերի արտադրություն
9. Ժելատինի, ինչպես նաև կաշվե հումքից, մորթուց և ոսկորներից սսսնծի արտադրություն
10. Ածիկի գործարաններ
11. Ձկնարդյունաբերություն

(1) ՊՏ թիվ C 1, 04.01.1990թ., էջ 20 և

ՊՏ թիվ C 287, 15.11.1990թ., էջ 11:

(2) ՊՏ թիվ C 260, 15.10.1990թ., էջ 185:

(3) ՊՏ թիվ C 168, 10.07.1990թ., էջ 36:

(4) ՊՏ թիվ C 209, 09.08.1988թ., էջ 3:

(5) ՊՏ թիվ L 158, 23.06.1990թ., էջ 56:

(6) Հաշվի առնելով, որ գործնականում հնարավոր չէ կառուցել կոյուղու այնպիսի համակարգեր և կեղտաջրերի մաքրման այնպիսի կայաններ, որոնց միջոցով հնարավոր լինի մաքրել բոլոր կեղտաջրերը, հատկապես, այնպիսի իրավիճակներում, ինչպես օրինակ՝ անսովոր հորդ անձրևի ժամանակ, ապա անդամ պետությունները տարափային կեղտաջրերից աղտոտումը սահմանափակելու միջոցներ պետք է որոշեն: Նշված միջոցները սահմանելիս կարող է հիմք ընդունվել ստորգետնյա հոսքերի կլանման մակարդակը կամ կարողությունը, կամ դրանց միջոցով հնարավոր է սահմանել տարեկան կտրվածքով արտահոսքի որոշ ընդունելի քանակը:

(7) Հաշվի առնելով, որ գործնականում հնարավոր չէ կառուցել կոյուղու այնպիսի համակարգեր և կեղտաջրերի մաքրման այնպիսի կայաններ, որոնց միջոցով հնարավոր լինի մաքրել բոլոր կեղտաջրերը, հատկապես այնպիսի իրավիճակներում, ինչպես, օրինակ՝ անսովոր հորդ անձրևի ժամանակ, ապա անդամ պետությունները տարափային կեղտաջրերից աղտոտումը սահմանափակելու միջոցներ պետք է որոշեն: Նշված միջոցները սահմանելիս կարող է հիմք ընդունվել ստորգետնյա հոսքերի կլանման մակարդակը կամ կարողությունը, կամ դրանց միջոցով հնարավոր է սահմանել տարեկան կտրվածքով արտահոսքի որոշ ընդունելի քանակը:

(8) ՊՏ թիվ L 194, 25.07.1975թ., էջ 26: 79/869/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 271, 29.10.1979թ., էջ 44):